

ՄՇԱԿ

Տարեկան դիմ 10 րուբլ, կես տարվան 6 րուբլ:

Ուսանողի համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից հարադրատուն մէջ:

Օտարադրողացիք պիտու են ողղակի

Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տոն օրերից):

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խրատանիսր րառին 2 կոպեկ:

ԲԱՆԱԳԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՄՇԱԿ

ԱՄԵՆՈՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ 1882 ԹԻՒՆ

(Տ Ա Ս Ն Ե Ւ Մ Է Կ Ե Ր Ո Ր Կ Տ Ա Ր Ի)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամայով:
ՊՐՕԳՐԱՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելետոն կամ Բանասիրական, VIII. Ցայտարարութիւններ:
ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, 10 րուբլ է, կես տարվան 6 ր., իւրաքանչիւր ամսին 1 րուբլ: Հատով համարները 5 կոպեկ:
Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցեով. Тифлис, редакция «Мшак».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՊՐՈՒՆԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մայրաքաղաքների հայ հասարակութիւնը: Ներքին, ՏԵՍՈՒԹԻՒՆ, Ներքին լուրեր: ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Հայոց խնդիր, Գերմանիա: Արտաքին լուրեր: ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Մշակների գրութեան առթիւ:

ՄԱՅՐԱԲԱՍԱՐԱԿԱՆ ԶԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Մինչև որ ամեն մի հայ, որ գրիչը ձեռքում բռնել կարող է, իր կարողութեան

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄՇԱԿՆԵՐԻ ԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ամենայն տեղ, ամենայն հասարակութիւնների մէջ, մշակների անտեսական դրութեան բարեփոխման հարցը վաղուց արդէն մտել է հասարակական ամենակարեւոր հարցերի շրջանը և այժմ չը կայ գրիթ մի փոքր ի շատէ ինքնաձեռնալ ազդ կամ ժողովուրդ, որը քիչ թէ շատ, այսպէս թէ այնպէս չը զբաղվէր մարդկութեան այդ ամեն նախնական դասակարգի վիճակով, չաշխատէր դոնէ ժամանակ առ ժամանակ նորոգելով նրա անխել վերքերի սպեղանին, թեթեւացնել նրա դառնակակիծ ցաւերը: Միայն մեզանում է, որ խեղճ մշակը մի չինական պատով անջատված հասարակութենից, դուրկ նրա որ և իցէ հոգացողութենից, ենթարկված ֆիզիկական և մարմնական անտեսանելի աշխատանքներին օրըստօրէ բարոյական և ֆիզիքական մաշվում, մահանում է, առանց արժանաւոր մեր կողմից հարկաւոր ուշադրութեան, մինչև անգամ առանց շարժելու մեր բնական մարդասիրական զգացմունքները: Ո՞ւր է պատահում ամենայն օր տեսնել թե՛ շուտաւ բեռնակիրն ծածկված թրքոված ցնցոտիներով, որ հալու հող պաշտպանում են նրա միայն կաշուից և չոր ոսկրներից բաղկացած մարմին կէտը, թէ ձմեռվայ սարսափելի ցրտերի ազդեցութենից, թէ ամառվայ արեգակի կիզիչ ճառագայթներից—հանգիստ համար չալակին, երկար չուանը ուսին գցած, փողոցի այն ու այն անկիւնում շինքը ծածկ սպասելիս, թէ անհաշի պատահի մէկը և անասնի նման նրա մէջքը բարձրելով 7—8—10 պուլի ծանրութիւնը և քաշը շինով քաղաքի այն ծայրից մինչև ծայրը, վերջապէս կը տայ նրան մի քանի սև կողկներ: Ո՞ւր է պատահել տեսնել խեղճ մշակին՝ երկաթի ծանր մուրճը ձեռքում փողոցում արեգակի, անձրևի և ձիւնի տակ, ակոր քարի վրա շինք:

չափ նպատակ է եւրոպային հայոց ազգի հետ մամուլի միջոցով ծանօթացնելուն, ուստի երկու մայրաքաղաքների հայ հասարակութիւնը այդ ուղղութեամբ ոչինչ չէ անում:

Մայրաքաղաքներում, Ս. Պետերբուրգում և Մոսկվայում, բաւական թւով հասցի կան, որոնք պատկանում են ինտելիգենցիային: Այդ ինտելիգենցիան բաժանվում է երկու մասի վրա. հայ ուսանողութիւնը և մայրաքաղաքներում այլ և այլ պաշտոններ և պարապմունքներ ունեցող հայ անձինք: Մենք չենք խօսում, ի հար-

նած՝ հարուստ քաղաքի փողոցների սաւառատակի համար սուր գետաբարձի փշրակիս: Ո՞վ չէ տեսնել այդ մի և նոյն մշակին անհաղին քարը կամ ծանր գերանի ծայրը ուսը առած մի քանի տասնեակ աստիճաններով այն ու այն աղայի շինութեան երկրորդ, երրորդ, յարկը բարձրանալիս: Նրա նիստը երեսից անձրևի նման այդ ժամանակ հեղում են քրտնիք կաթիլներ, նրա կուրծքի ոսկորները ուժեղ ճնշողութենից դուրս են ցցվում, աչքերը արեան հոսումից սաստիկ կարմրում են, ծունկերը չը դիմանալով վերած ծանրութեան, ակամայ ծալվում են, բայց նա մի ստոյիկեան համբերողութենով տանում է այդ բոլորը, ըստ որում նրա անհաշի թշնամի քաղցածութիւնը ստիպում է տանել, նա պիտի ինչպէս և իցէ այսօր մի քանի կողկներ ձեռք բերել իր և իրան ընտանիքի թշուառ գոյութիւնը առաջ մղելու համար:

Նայել խորը ուշադրութենով այդ բոլորի վրա, սիրելի ընթերցող, և դու կը գտաս մի գերբնական սարսափ, եթէ ունես փոքր ի շատէ զգայուն սիրտ և թափանցող հայեացք:

Մշակը հաւածվում է ոչ միայն ճակատագրի անողորմութենից, այլ և իր արեւակիցների, իր եղբայրակիցների դազանային անխղճութենից: Տե՛ր ինձ ձեռք, սիրելի ընթերցող, հետեւի ինձ և տես թէ այդ ինչպէս է կատարվում, թէ մինչև որ անտիճան մշակի մարդկային նոյն իսկ բնական իրաւունքները ոտնակոխ են լինում դառնալիս շահախնդիրների ձեռքում: Միայն մի պակասութիւնները, ըստ որում, կանխապէս խոստովանում են, որ այդ իմ ոյժից բարձր է, ես միայն մատնացոյց կանեմ քեզ այն անկեանքի վրա, կենդանում, անցքեր, որոնց մասին գուցէ դու կենդանուից լսած էլ չը լինես: Ես քեզ չեմ տանի վերև ասած փողոցային բեռնակիր, կամ շինութեան մշակի մօտ, որոնց դու ամենայն օր

կէ, մայրաքաղաքներում ապրող մեր գրիթ անհրազէտ վաճառականների մասին. բայց մի՞թէ քիչ են Մոսկվայում և Ս. Պետերբուրգում հայ ուսուցիչներ, պրոֆեսորներ, պաշտօնականներ և իրանց եկամուտներով ապրող հայերէն և ռուսերէն լաւ իմացող ընդհանուր կրթութիւն ստացած անձինք: Ի՞նչ ենք պահանջում նրանցից,—ամենաչնչին բան. ստանալ թէ Թիֆլիսի և թէ Կ. Պոլսի հայ լրագիրները և նրանցից քաղուածք անել ուստ այլ և այլ լրագիրների, ամառներին և շարժաթերթերի համար:

Հայ ինտելիգենցիային պատկանող ունեւոր մարդիկ այդ գործը կարող են շատ հեշտութեամբ կատարել. նրանք ունեն ժամանակ և կարօտ չեն ուստ խմբագրութիւնների կողմից դրամական վարձատրութեան: Բայց ի՞նչի չեն կատարում այդ տեսակ թիւթի գործ, որ այնու ամենայնիւ մեծ օգուտ կը տար ազգին: Պատճառը շատ հասարակ է. նրանց պակասում է մի բան, —ազգասիրութիւնը:

Գանք այժմ հայ ուսանողութեանը: Շատ անգամ խօսվել է այդ մասին մեր լրագրում և ամեն անգամ ուսանողները պատասխանել են, որ ժամանակ չունեն կամ աղքատ լինելով չեն կարող նուիրել իրանց ոյժերը այդ տեսակ թէ՛ և անշան ծոռալութեանը իրանց ազգին:

Խօսենք նախ հարուստ ուսանողների վրա: Նրանք ոչ թէ միայն աւելորդ ժամանակ

աչել առաջ ունեն և այնքան տեսել են, որ քո աչքերը ըմբոցել են, այլ կը տանեմ քեզ մի ուրիշ տեղ, ուր մշակի դրութիւնը առաւել տխուր, առաւել սարսափելի է: Այս տեղերը Բազուի հոշակված նաւթային հանքահորերը և այդպէս անուանված սև քաղաքի գործարաններն են:

Վերջին երկու տասնեակ տարիները Բազուի նաւթային արդիւնաբերութեան արագ զարգացումը, քաշից բերաւ այդ քաղաքը Անդրկովկասի զանազան անկիւններից, Ասի, Տաթարստան, Ղարաբաղի, Շամախու և ուրիշ շատ գաւառներից, Ռուսաստանի և Պարսկաստանի խորքերից, բազմաթիւ բնակչություններ, որոնք օրական ապրուստը հայթայիւնելու նպատակով, թողնելով իրանց հայրենի հողը, սիրելի ընտանիքը և զաւակները և կամ այժմ կենսաբանացած են այստեղ: Բաւականի վաղուցեան նաւթային հանքահորերում և սև քաղաքում:

Այս քաղաք անուանվում է այստեղ նաւթային գործարանների խումբը, որ տարածված լինելով մօտաւորապէս 6 քառակուսի վերստաչափ տարածութեան վրա, հեռուից մարդու աչքին ներկայացնում է մառախուղով պատած մի փոքրիկ քաղաք, որը սև մականուներ կրում է այն պատճառով, որ այստեղ ամենայն բան սև է սկսած անշուշտ աւարականների մինչև տնային կենդանիները և մարդը: Բաւական է, այստեղ այդ քաղմաթիւ գործարաններից դուրս եկող նաւթային մնացորդի թանձր ծխով վարակված օդի մէջ երկու ժամ մնալ և մարդ միանգամայն կը կերպարանափոխվի օտից մինչև դուրս ծածկվելով սև մուրով: Անտուր մարդը չէ կարողանում այս մառախուղում երկար մնալ, ուր խտակ օդի բացակայութիւնը խանգարում է նրա կանոնաւոր շնչառութիւնը: Չը նայելով, որ գործարանները միմեանցից բաւական տարածութիւնով հեռու են, նրանցից դուրս եկող ծխերը խառնվե-

ունեն և շատ չէին կորցնի շաքարը մի անգամ թիւթի քաղաւածներ անելով հայ լրագիրներից, բայց և կարող էին նիւթապէս օգնել իրանց չքաւոր ընկերներից մինչև կամ միւսին, որպէս զի սա յատկապէս այդ գործով պարապի օրվայ մէջ՝ մի տաս րօպէ և այնուհետև շաքարը մի անգամ տանի խմբագրութիւն հաւաքած քաղաւածները: Մենք գիտենք թէ մեր հարուստ ուսանողութիւնը ինչպէս է ապրում մայրաքաղաքներում: Ժամանակ վատնել, փողեր ծախել շուկայութեան և անպէտք բաների վրա, որ չափերը աւելի,—հայ նրանց կենքի եղանակը: Ուսանողները մեզ ի հարկէ կը պատասխանեն դարձեալ, թէ հին ուսանողութիւնն է այսպէս եղել, իսկ նորը օրինաւոր է: Փառք Աստուծու, մենք խօսքիկայում չենք ապրում և ամեն տարի տեսնում ենք, նոյն իսկ անցեալ և այս տարի տեսնել ինչպէս վերադառնում են Մոսկվայից և Ս. Պետերբուրգից մեր ունեւոր ընտանիքների համալսարանական ուսումնաւարտ երիտասարդները. դարձեալ, անդադրեցած, քափ փչող, բթացրած, տիկիներէ՞ պէս հագնված, փողոցներում թափառաշրջիկ, որ և է մօքի վրա իրանց ուղեղը կենտրոնացնել անկարող,—հայ մեր հարուստ ուսանողների պատկերը:

Իսկ մեր աղքատ ուսանողները. նրանք անդադար դանդաղում են թէ նիւթական միջոցներից դուրս են, ստիպված են իրանց ապրուստը հայթայիւնելու համար դասեր

լով միասին կազմում են մի այնպիսի թանձրութիւն, որի միջից հալու հող կարողանում են թափանցել արեգակի ճառագայթները:

Ահա այդ մառախուղապատ երկրի տակ է անցկացնում իր տարիները Բազուի քաղաքի մշակների մեծամասնութիւնը, խմբերով տեղաւորված այս ու այն գործարանում և հէնց այստեղ պիտի ծանօթանաս, սիրելի ընթերցող, նրա վիճակի հետ, որ խմանալ չը գտնես, մտնելու է անտանելի է նա: Հեռու չը գտնես, մտնելու է անապաշտ պատահող գործարանը և տեսնես, թէ ինչ է անում այստեղ, ինչպէս է առաջ տանում նա իր թշուառ գոյութիւնը: Ահա մի անգամ հարկաւոր է գէթ մօտաւորապէս ծանօթանալ նրա բնակարանի հետ: Անկարելի է այստեղ նկարագրել այդ բնակարանի տեսքը, չունենալով Բաֆֆի գեղարուեստական վրձինը: Նրեական լի քեզ, սիրելի ընթերցող, երկու սաժէն լայնութիւնով, չորս սաժէն երկայնութիւնով և 5 կամ 6 ֆուտ բարձրութիւնով մի խրճիթ, միայն խրճիթ բառի տակ չը հասկանաս այն աղքատ բայց պարզ և մաքուր օդով բնակարանը, ուր բնակվում է առողջ գիւղացին, ոչ, այլ մի չափազանց կեղտոտ և խոնաւ խոց, ուր կարող են ապրել միայն անասունները այն եւ նրանցից ամենակեղտոտները—խոզերը: Այստեղ, այդ խոցի մէջ, ուր ապրում են տասնից բնակչութիւնը, միմեանց չէ փոխվում, չէ նորոգվում, ուր մուրով սեւացած պատերի միջից խոնաւութիւնը անպակաս է, ուր հազար ու մի կեղտոտութիւններով ապակաւում յատակը ոչինչով ծածկված չէ, ուր նոյնպէս մուրի տակ կորած առաստաղը հազարաւոր սարդերի նման է, անկարելի է խօսք անգամ արտասանել առողջապահական որ և է կանոնների մասին: Այն միակ պատուհանը, որը չինված է, կարծես թէ, այդ խոցին առաւել մաշվել, առաւել տխուր կերպա-

տալ մասնաւոր տներում և ժամանակ չու-
նեն ազգի ին ծառայելու: Բայց նրանք մե-
ռանում են որ նոյն իսկ այն փոքրիկ պա-
րապմունքը որ մենք նրանց առաջարկում
ենք, բացի այն օգուտից որ նա կը տայ
ազգին, կարող է նրանց տալ միջոց ապրե-
լու: Զբաւոր հայ ուսանողը ասում է թէ
պէտք է դասեր տայ և ուրախ է երբ քա-
ղաքի մի ծայրից միւս ծայրը վազելով ա-
միսը մի 30 րոպէ կաշխատէ: Իսկ մի թէ
հայոց լրագիրներին քաղաքները անելով
և զետեղելով ռուս լրագիրներին մէջ նոյն
ուսանողը չէ կարող ամիս մի 30 կամ 40
րոպէ աշխատել: Մենք ճանաչում ենք ան-
ձինք Թիֆլիսում, որոնք միմիայն «Մշակի»
քաղաքները տեղական ռուս «ԲԱՅԿԱՅԵ»
լրագրում, ամիսը մինչև 40 րոպէ էին վա-
տակում: Իսկ «ԲԱՅԿԱՅԵ» լրագրիւր չունի
այն նւթական միջոցներ, որ ռուս մայրա-
քաղաքներին ռուս լրագիրները, որոնք կարող
են իւրաքանչիւր տպիւստ տողին աւելի
թանկ վճարել:

Եւ մի թէ այդ տեսակ պարապմունք ա-
ւելի հաճելի չէ, քան թէ մասնաւոր աը-
ներում դասեր տալու յոգնեցնող, սպանիչ
պարապմունքը:

Բայց ի՞նչի այդ չին անում մայրաքա-
ղաքներին չքաւոր հայ ուսանողները. որով-
հետեւ նրանց պակաս է ամեն բանի մէջ
սեփական ինիցիատիւր և ամեն բան նրանց
պէտք է բացատրել:

Նոյն սեփական ինիցիատիւրից զուրկ, նը-
րանք վերադառնում են իրանց երկրիւր, այն
գանազանութեամբ որ ռուսում աւարտելուց
յետոյ նրանք աւելի էլ ինքնահաւան են
լինում, որովհետեւ ռուսում աւարտել են:
Այնուհետեւ նրանց այլ ևս ոչինչ չէ կա-
րելի ասել:

Գ. Ա.

բանք տալու համար—այնքան փոքր է, որի մի-
ջին ներս թափանցող օդը հազիւ թէ բաւակա-
նութիւն անի մի մարդու առողջ չնպաստեալ
համար, ուր մնաց այն 10 կամ 15 խեղճերի
համար, որոնք զետեղված բնակվում են այստեղ,
որոնց չնպաստելուց օդը ապակաւովելով և չը
նորոգվելով անսովոր մարդուն մի սարսափելի
գարշահատութիւն է փչում, երբ նա ստ է դը-
նում այստեղ: Աւելացրու սրտ վրա և մշակնե-
րի դէպի իրանց սեպական առողջութիւնը ու-
նեցած անոգութիւնը, որը, պակաս չէ նպաս-
տում նրանց վիճակի դառնութեան: Մշակը շատ
ժամանակ իր ունեցածով անգամ չէ օգտվում,
նա իր բնակարանը հազիւ թէ ամակաւն մի
քանի անգամ սրբում է, նա այդ փոքրիկ պա-
տուհանը զգուշար թէ տարիներով բացում է գէթ
փոքր ի շատէ բնակարանի օդը թարմացնելու
համար: Բայց գիտէ՞ ինչիցն է առաջ գալի մը.
չակի այդ թուրութիւնը, առաջին նրա յուսա-
հատութիւնից, երկրորդ անհասկացողութիւնից
և երրորդ որ ամենազգրաւորն է, սովորութիւ-
նից: Մշակը յիշաւի նոր վերադարձած գիւղա-
կան առողջ կլիմայի տակից, երբ առաջին ան-
գամ մտնում է այստեղ, նա զգում է օդի ապա-
կանութիւնը, նրա գարշիկի հոտը, բայց մի
յայտնի ժամանակ անգրկելով այդ օդում, նա
փոքր առ փոքր ընտելանում է և նա այնու-
հետեւ էլ անտարբերանում է դէպի իր բնակարա-
նի անմարտութիւնը և թէ նրա օդի ապակաւու-
թիւնը: Ասկայն հարկաւոր չէ անշուշտ բժիշկ
լինել, որ իմանալ թէ իր կեանքի համար ինչ
թանկ գնով է ձեռք բերում անմարտութիւնը, օգուտ
բնակվելու սովորութիւնը: Ահա այդ մասին ինչ
է ասում յայտնի Լուիսը. «Ենք տեսնում
ենք թէ ինչպէս անմարտութիւնը բնակարաններին ա-
պակաւութեամբ օդում առկոր են հետեւեցնում և
իբր թէ անվնաս ապրել զանազան խեղճեր ա-
ռանց զգալու այդ ապակաւութիւնը, մինչդեռ
մեզանից ամեն մէկը երբ ու է դնում այստեղ,

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուս լրագիրներում կարդում ենք որ Թաւա-
նոր կայսրի թագադրութիւնը, որ պէտք է կա-
տարվել եկող թւի մայիս ամսին, յետաձգված է:

Լրագիրները ասում են որ իշխան Գեորգի օլ-
կորսակովի կովկասեան կառավարչի նշանակվե-
լը վերջացած բան է:

Ասում են որ գեներալ Զէրիխով նշանակվում
է Տուրքեստանի զօրքերի հրամանատարի օգնա-
կան:

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են: «Այստեղ ձեր լը-
րագիրը շատ քիչ օրինակներով է ստացվում,
բայց ամենքը հետաքրքրվում են թէ ինչ է զը-
ված «Մշակի» մէջ: Տեղիւն ամենահարուստ մար-
դիկն անգամ, որոնց համար տարեկան 10 րոպէ
տալը ոչինչ չէ նշանակում, փաստը ստանալուն
պէս գնում են իրանց ծանօթների մօտ, խլում
են նրանցից «Մշակի» համարները, այնպէս որ
բաժանորդները զերթ միջոց էլ չունեն կարդա-
լու իրանց ստացած թերթերը: Մեր հարուստները
իրանք մեծ հետաքրքրութեամբ կարդում են,
բայց փող ծախել չեն կամենում: Իսկապէս չքա-
ւորներն են պահպանում «Մշակը», իսկ ի՞նչ
բոլոր հայերը հարուստ լինէին, ոչ ոք չէր ստա-
նայ հայ թերթը և չէր պահպանի նրա գոյու-
թիւնը: Հալը քանի հարուստ է դառնում, այն-
քան աւելի մշտն է լինում, այնքան աւելի կա-
կան և անտարբեր է դառնում դէպի ազգի ընդ-
հանուր շահերը»:

Մեզ գրում են Ի. Գ. Ի. Բ. Յ. հետեւեալը. «Այս
տարի մեր երկսեռ զարդերը շատ լաւ են գը-
նում: Ուսուցիչները եռանդով են պարապում
իրանց առարկաներով: Այստեղից հայ թատրոնա-
սէրների խումբը գիտաւորութիւն ունի մի ներ-
կայացում տալ: Կը խաղան մի ողբերգութիւն և
մի կատակերգութիւն»:

Իզդրելից մեզ հաղորդում են որ չը նայելով
թէ Իզդրելը չըլապատող տարրի վրա ձիւն է
եկել, բայց քաղաքում եղանակը տաք է և ցը-
տերը դեռ չեն սկսվել:

Իսկոյն գրում է թէ օդը փչացած է, բայց որով-
հետեւ մենք ևս յետոյ փոքր առ փոքր սովորում
ենք նրան, այնուհետեւ մեզ էլ թվում է թէ նը-
րանից մեծապէս հետեւանք չեն առաջա-
նում: Ահա ինչու մի կայանում մեր մոլորու-
թիւնը: Մենք բաւակաւանում ենք ապակաւ-
ված օդով—որովհետեւ սովորում ենք նրա պայ-
մաններին: Բայց գիտէ՞ ինչ գնով, ինչ միջոց-
ներով ենք մենք ձեռք բերում այդ պայմաննե-
րին ընտելանալու կարելիութիւնը: Մեր օրդա-
նիդ մի բոլոր անդալական մասերի և զգայարան-
ների թուլանալով, որը մեզ համար առաջաց-
նում է թթութեան համեմատաբար պակաս քա-
նակութեան ներշնչելը: Փչացած օդը բաւական
է միայն հիւսնող օրգանիզմ ունեցող մարդուն,
ինչպէս և նրանով բաւակաւանում են սառնա-
րիւն կենդանիները: Երբ մենք մտնում ենք ա-
պակաւված միջոցների մէջ, մեր չնպաստելու
գիտաւորանում է և այդ պատճառով թուլանում
են և մեր զգայարանները, որից յետոյ կրկին
մեր չնպաստելու թեթեւանալով, աւելի թթութեան
նի կարծրութիւն չենք զգում և այստեղ ար-
տաղրում ենք անխայիթ թթութի համեմատա-
բար շատ պակաս քանակութիւնը քան թէ մա-
քուր օդի մէջ: Առանց այդ սովորութեան, այ-
սինքն առանց մեր օրգանիզմի բոլոր կենդա-
կան վարումների թուլանալու, մեզ համար ան-
կարելի կը լինէր չարանակաբար մնալ այդ ա-
պակաւված միջոցներով մէջ *):

Ահա մի գեղեցիկ պատասխան այն կարծա-
միտ և քաղաքային բուրժուաներին, որոնք միշտ
երբ են խօսք եւ ունեցել նրանց հետ գործա-
րաններում բանողներին բնակարաններին մասին,
չեն ամաչել յայտնել այն եղուխական միտքը,
թէ մշակը առողջ բնակարանի կարծրութիւն
չունի, թէ նա սովորել է իր կեանքը անցկաց-
նելու այնպիսի պայմաններում, որոնք մի և նոյն
ժամանակ մշակներին ծառայում են և անկողնի
տեղ, իսկ գիւղերները վերմակի փոխարէն նրանց
ծառայում են այն միակ ցնցոտիները, որոնց

*) Տես, Михайловъ, Ассоціаціи. Երես 45. ծ. 3.

Մեզ գրում են Ա. Ա. Ա. Յ. Յ. որ այդտեղի
զարդական և եկեղեցական կառուածների գոր-
ծերը շատ անկարգ գրութեան մէջ են: Եկեղե-
ցիները քանդվում են, նրանցից մինը փակվեց,
եկեղեցական արդիւնքները անկարգութեան և
այլ և այլ զեղծումների պատճառով օրից օր
պակասում են: Նոյնպէս վատ գրութեան մէջ
են և այն կառուածները, որոնց արդիւնքներով
պահվում են հայոց զարդաները: Եթէ հայ հասա-
րակութիւնը ինքն եռանդով ձեռք չառնի իր
ազգային և եկեղեցական գործերի ղեկը, աւե-
լացնում է մեր թղթակցը, հետեւանք զարդ-
ների գոյութեան համար շատ վատ կարող է
լինել:

Մենք իմացանք որ քանի մի չարթ է ար-
դէն որ կարգաւոր Թէմուրազեանց հաստատվել
է երեցփոխան Հաւաքարի Էմիւրանցից եկեղե-
ցու:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԻՆԿԻՐ

Վերջին թղթարկով եկած եւրօպական
լրագրաց մէջ կը կարդամք թէ Անգլիոյ ար-
տաքին գործոց նախարար Լորդ Գրէնվիլ ծա-
նուցիւ է տէրութեանց թէ քիչ օրէն դար-
ձնալ իրենց ուշադրութիւնը պիտի հրաւիրէ
հայկական խնդրոյն վրա, և այն միջոցաց
վրա, զորս պէտք է ի գործ դնել Փոքր-Ա-
սիոյ քրիստոնեայ և իսլամ ժողովրդոց վի-
ճակը բաւոքելու համար: Վերջին «Կապոյտ
Տեւորակն» քաղելով, արդէն մեր ընթեր-
ցողաց ներկայացած ենք այն կարեւոր բա-
նակցութիւնները, զորս տարւոյս սկիզբը
Լորդ Գրէնվիլ ունեցած էր միւս մեծ պե-
տութեանց հետ, վերաբերմամբ 61-օրոյ յօ-
դուածի խնդրոյն, և այն պատասխանները,
զորս անոնցմէ իւրաքանչիւրը տուած էր
Անգլիոյ կառավարութեանը այս ձեռնար-
կին: Կը թվի թէ յայնժամ եղած առար-
կութիւնը այժմ ոչ ևս տեղի ունենալով,
Լորդ Գրէնվիլ պատշաճ համարած է կրկ-
նել իւր առաջարկն, որոյ արդեանց վրա

նել խնաւ և կեղտոտ պարզախնդրում: Բայց
թողնենք այդ:

Ինչպէս ասացինք այս 4 սառնեւ երկարու-
թիւնը, 2 սառնեւ լայնութիւն և 5 կամ 6 ֆուտ
բարձրութիւն ունեցող խոցի մէջ զետեղված
են 10—15 մշակներ: Եթէ այդ թիւերը բազմա-
պատկենք միմեանց վրա, մենք կը տեսնանք
2,352 խորանարդ ֆուտ օդի պարունակութիւն:
Բաւական է արդեօք օդի այդ չնչին քանակու-
թիւնը, եթէ ոչ 15 ֆուտ 10 մարդու ապրուստի
համար, որոնք այստեղ զետեղված են:—Հազար
անգամ ոչ յեթէ զանազան փորձառու բժիշկ-
ները—Գուբերի, Զէնֆուրեքէնի, Ռէկամի և ուրիշ
երեկոյն հեղինակները գրութեան համեմատ—ըն-
դունենք թէ մի չափաւոր մարդուն անհրաժեշտ
է ունենալ 400-ից—մինչև 800 խորանարդ
ֆուտ օդի տարածութիւն փոքր ի շատէ առողջ
բնակութեան համար—ուրեմն 10 մարդու համար
գտնէ միջին թուով հարկաւոր է 6,000 խ. ֆ.:
Այս տեղից կարող եւս ընթերցողը եղբակցնել
թէ որքան կործանիչ ներգործութիւն կարող է
ունենալ 2,352 խ. ֆ. օդի չնչին տարածութե-
ւը մի տասնեակ թշուառների կաղմվածքի վրա
նա և այն ժամանակ, եթէ այդ օդը լինէր մա-
քուր, բայց նա, ինչպէս վերև ասացինք, մա-
քուր չէ: Կան և այնպիսի գործարաններ, ուր
մշակներին բնակարանները առաւել անձուկ են,
ինչպէս մի թուրքի գործարանում: Եւ գտայ մի
գեղեցիկ փորձի, որի երկարութիւնը 16 ֆ.,
լայնութիւնը 8 ֆ., իսկ բարձրութիւնը 5 1/2 ֆ.
էր, այստեղ բնակվում էին 6 մշակներ:
Շատ գործարաններում, մշակների բնակարան-
ներում չը կան մաճակալներ, իսկ եթէ կան էլ,
այդ մի քանի նաւթոտ տախտակներ են միմեանց
կաղմում շարած և մի քանի կեղտոտ և պատու-
ված փոխաթնելով ծածկված, որոնք մի և նոյն
ժամանակ մշակներին ծառայում են և անկողնի
տեղ, իսկ գիւղերները վերմակի փոխարէն նրանց
ծառայում են այն միակ ցնցոտիները, որոնց

շատ չանցած, տեղեկութիւն կրնամք ստա-
նալ:

Եւ մտական խնդրոյն մօտալուտ կարգա-
դրութիւն և երկարական խնդրոյն հան-
գարտագոյն վիճակի մը մէջ մանկը պաշ-
տօնական ակմբոց մէջ մեծագոյն տրամա-
դրութիւն մը յառաջ բերել կը թվին ան-
գամ մը ևս զբաղելու այն խնդրով, զոր
յարուցած է 61-օրոյ յօդուածը:

Ինչպէս կանխաւ ծանուցված էր, գոհու-
թեամբ կը լսեմք թէ Բ. Գուբեր, տէրու-
թեան Հայաբնակ գաւառաց վիճակի բար-
ւոքման համար տաճած հոգատարութեան
շօշափելի ապացոյց մը տալու նպատակաւ,
այս շարթու ձեռնարկիւ է անմիջական
բարենորոգմանց ինչ ինչ գործնական միջոց-
ներ ճրագրել, գործադրելու համար ի
ձեռն արժանաւոր պաշտօնէից, որոց մէկ
մասը տէրութեան հայ հպատակներէն պի-
տի առնվի:

(Մասիս)

ԳՆՐՄԱՆԻՍ

Ներքին գործերի միսիստրութեան իւրա-
ժեմի քննութեան ժամանակ լայնատաղի
մէջ Վինդհորստ զանգառովում էր, որ լայն-
ստաղի, բաւարական և զաւառական սէյմ
ները պարապմունքները միաժամանակ են
սկսվում և զրանով լայնատաղից նշանաւոր
ոյժեր են խլում: Նա ափսոսում է, որ պե-
տական կանցիլեր չէ աշխատում այդ ան-
յարմարութեան առաջն առնել: Միմիստր
Բէտտիգեր նկատեց, որ այդ կողմից պե-
տական կանցիլերի ազդեցութիւնը այնքան
նշանաւոր չէ, որքան կարծում են: Ներ-
կայացրած այդ զանգառը ապացուցանում
է, որ լայնատաղի շուտով դուրսեկը չէ
կարող խանդարել մի քանի ժողովների պա-
րապմունքների միաժամանակ լինելուն: Ու-
րեմն մնում է միայն որքան կարելի է սահ-
մանափակել պարլամենտական գործերը: Կա-

մէջ նրանք չըլում են ցերեկները: Այն գործա-
րաններում, ուր այդ նաւթոտ տախտակներն էլ
չը կան, մշակները գիւղերները քնում են հողա-
յատակի վրա, որ միշտ չափազանց խոնաւ է
լինում գործարանները ծովի ափից մօտ լինելու
պատճառով, այնպէս որ շատ տեղերում երկու
երեք արշին խորութեանը գետնից ծովի ջուր է
զուրս գալիս: Թէ որքան միասակար է մարդու
առողջութեան համար մի այդպիսի խոնաւու-
թիւն—այդ կարող է իմանալ ամենաազգեղ մե-
զանից: Յօդագաւառութիւն, ոսկրացաւութիւն, զեղ-
նացաւ (Желтуха) կատարը ստամոքսի, որ շատ
ժամանակ փոխվում են թորախտութեան—անա-
խտաւորութեան հետեւանքներ: Նա մանաւանդ
մշակները տանջվում են զանազան ցաւերով այս
խոնաւ բնակարաններում ձմեռը, ցրտից, Վա-
ռարաններ շատ քիչ բնակարաններում կան, իսկ
մեծ մասամբ մշակները ձմեռը տաքացնում են
իրանց բնակարանները մանցալով *): Բայց առա-
ւել լաւ կը լինի եթէ նրանք ձմեռը բնակիւ
կրակ չը վառեն իրանց բնակարաններում, որով-
հետեւ նրա գործութիւնից խոնաւ պատերի միջից
զուրս գալով տամկութիւնը, օդը լքցնում է նե-
խեալ գոլորշիներով սառնակցնելով այդպիսով
նրա գարշահատութիւնը:

Անուշադիր թողնվելու չէ և այն հանգամանքը,
որ շատ քիչ գործարաններում են հայ մշակները
պարսկ մշակներից առանձին ապրում, իսկ
մեծ մասամբ այդ երկու տարրերը միշտ միասին,
մի սենեակում են կենում: Պարսկաստանից եկող
մշակներից շատերը իրանց հետ բերում են զա-
նազան սեռական հիւանդութիւններ, մեծ մա-
սամբ սիֆիլիս անուանված վարակիչ ախտը:
Շատ հասկանալի է, որ այդ ախտաւորները ապ-

*) Մանդալ կաւից չինած մի տեսակ անիա-
կան անոթ է, որի միջոցով վառում են անուշի
կամ տաւիղ ասիական տներում: Ե. Բ.

առաջարկութեան պահանջում էր 85,000 մարկ առանձին տնտեսական խորհուրդ կազմելու և նրան պահելու համար Այդ առիթով պատգամաւոր Բիւրոյի ասաց, որ ինքը և իր կուսակցութիւնը պատրաստ են ընդունել յիշեալ ծախսերը այն պայմանով միայն, որ յիշեալ խորհուրդը մշտական օրգանական հիմնարկութիւն չը դառնայ: Այդ ծախսերը կարող են մերժվել ոչ քաղաքական պատճառներով և ոչ նրա համար, որ տնտեսական խորհուրդի ազդեցութիւնը պարզապէս ազդեցութիւնից մեծ կը լինի, այլ այն պատճառով, որ, ինչպէս փորձը ցոյց է տուել, այդպիսի խորհուրդակցական հիմնարկութիւնները տրամադրված են լինում մեծացնել իրանց հեղինակութիւնը: Իշխան Բիւրոյի ասաց հետեւեալը: «Կառավարութիւնը այս գէպքում գործում է առանց կողմնակի մտադրութիւնների: Նա միայն պէտք ունի գործնական խորհուրդներին, որոնց կարող է տալ տնտեսական խորհուրդը: Ներկայումս կառավարչական առաջարկութիւնները գլխաւորապէս հիմնված են լինում այս կամ այն միջոցառութեան մասնագիտական բաժինների տեղեկութիւնների վրա: Կառավարութիւնը կամենում է, որ առաջարկված միջոցը անպատճառ ընդունվի և անհապառ նրան կառավարի մինչև նրա ընդունվելը: Եթէ ըստիւստագը նրան կը մերժէ, կառավարութիւնը մի ազդարարութեամբ կը դիմէ ժողովրդին և միացեալ կառավարութիւններին: Կառավարութիւնը կը հրաւիրէ նրանց ուղարկել իրանց հաւատարմատուններին գերմանական տնտեսական խորհուրդ կազմելու համար: Այսպէս թէ այնպէս կառավարութիւնը անհապառ կը վերանորոգէ իր պահանջը ըստիւստագին: Բամբերգերի նկատեց, որ հարցը փոքր մէջ չէ, այլ տնտեսական խորհուրդի ձեւին է վերաբերում: Նա կասկածում է, որ կառավարութիւնը կամենում է խորհուրդը պարզապէս

տի հակադէմք դարձնել: Ֆրանսիայի մէջ գիւղատնտեսական խորհուրդը ապացուցեց, որ նա կառավարութեան գործիք է: Այդ խորհուրդը այնպէս է կազմակերպված, որ կառավարութիւնը նրա հետ կարողանում է ամեն բան անել: Տնտեսական խորհուրդը կանցլերի խորհրդատուի դերը կը կատարէ, բայց մի այնպիսի խորհրդատուի, որ չի համարձակվի այլ կարծիք ունենալ, բացի պետական կանցլերի կարծիքից: Հետագայը վաճ կողմերը չեն կարող դատաւորներ լինել, նրանք միայն վկաներ կարող են լինել: Գործի հետ ծանօթ մարդկերանց այդպիսի խորհուրդ կազմելով, գուցէ կը խլեն բայեստագից գործին ծանօթ անձանց և միակողմանի խորհուրդ կը կազմեն: Բիւրոյի նրան պատասխանեց, «Մենք կամենում ենք վկաներ և կառավարութեան օգնականներ ստեղծել և ոչ թէ դատաւորներ: Պարլամենտը անկարող է ունենալ մասնագիտական այն տեղեկութիւնները, որոնց կարող է ունենալ տնտեսական խորհուրդը: Բայեստագը միայն քննում է և ուղղում է օրինագիծները, իսկ խորհուրդը նրանց կը նախապատրաստէ: Բայեստագը կարող է հանդիստ մնալ: Նրա համար միջոցութիւն չէ պատրաստվում: Այդպիսի մանրակրկիտ նախաձեռնում մինչև այժմ ոչ մի պարլամենտ չէ ցոյց տուել: Ստորոտի բան է տեսնել, թէ ինչպէս պետական կանցլերը պաղատում է միջոցներ տալ իրան հարկաւոր տեղեկութիւնները հաւաքելու համար: Կարծես թէ ըստիւստագը դրանով կամենում է կառավարութեանը ասել, «Ի՞նչ կանէք տեղեկութիւնների: Դուք առանց այդ տեղեկութիւնների էլ մեզ համար բաւական խելագիր էք: Մենք չենք կամենում, որ դուք մեզանից շատ տեղեկութիւններ ունենաք: Դրա համար մենք ոչ մի կոպէկ չենք տալ: Լասկանայի է, որ տնտեսական խորհուրդը կառավարութեանից կը կազմվի: Նա պէտք է ամեն տեղից հաւաքէ տեղեկութիւններ

ունեցող անձանց: Բայց մենք չենք էլ երեւակայել նրանց դատաւորներ դարձնել: Ի՞նչ հարկաւոր են մեզ դատաւորներ, քանի որ նրանք աշխարհի վրա առանց այդ էլ շատ են: Մեզ իւրաքանչիւր դէպքի համար մասնագիտական քննող յանձնաժողովներ են առաջարկում: Բայց այդ գործը անելի դժուար է: Երբեք իւրաքանչիւր անգամ փորձել նրանց տեղեկութիւնները: Բամբերգերի կարծում է, որ մենք խորհուրդի մէջ իսկական ճշմարտութիւն չենք գտնի: Բայց որտեղ է նա և ո՞վ կարող է որոշել, թէ նա ի՞նչ է նշանակում: Ես նրան չեմ էլ փնտռում այնպէս, ինչպէս հասկանում է Բամբերգերը: Ես միայն միջոց եմ փնտռում գործերի մասին իրականապէս դատելու համար: Հաւաստանքից մէջը նկատեց, որ չորս տարիների ընթացքում շատ բան ես չը կարողացայ սովորել: Բայց ես իմ գիտութիւնները միջին չափից բարձր էլ չեմ դասում: Միայն ի՞նչ է չորս տարիների ընթացքում կարելի է շատ բան չը սովորել, ուրեմն երեք տարիների ընթացքում ասելի էլ քիչ կարելի է սովորել: Իսկ ձեզանից, պարոններ, շատերը երեք տարիներից աւելի սովորել են: Մէկ աւելորդ տարին էլ ինձ իրաւունք է տալիս դնեալ այնքան տեղեկութիւններ, որքան ձեզանից շատերը: Զը կարծէք, որ ձեր համալսարանների ընտրեալ դասաւորով դուք իմաստութիւն էք ստանում, կամ թէ չէ դուք ներկայացնում էք պարլամենտին ձեզ ընտրող բոլոր 10,000 խելքերը: Հաւատացեք, որ դուք ինձանից շատ չէք հասկանում: Համեստ լինեք դուք էլ, ես էլ: Հաւատացեք, որ մենք ամենքս էլ դեռ շատ բան պէտք է սովորենք: Իդուր պ. Բամբերգեր իրան և իր կուսակցութեանը այնքան բարձր է դասում, որ կառավարութեանը կարողանայ ասել կառավարութեանը, «Մենք ամեն բան գիտենք թէ ըստիւստագի և թէ

կառավարութեան համար: Նա ուրիշներից սովորելու իրաւունք չունի: Այնուհետեւ Բիւրոյի աւելացրեց, որ այդ ծախսերի մերժելը պարլամենտական քաղաքականութեան հակառակ կը լինի: Այնուհետեւ առաջարկութիւնը քուէարկվեց և մերժվեց: 169 ձայների մեծամասնութեամբ 83-ի դէմ: Առաջարկութեան դէմ քուէարկեցին ազատամիտ բոլոր կուսակցութիւնները, դեմոկրատները, սօցիալիստները և կենտրոնական կուսակցութեան մեծ մասը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ֆրանսիական ազգային ժողովի նիստի ժամանակ, որի մէջ քննվում էր Տունիսի պատերազմը շարունակելու խնդիրը, Գամբետտա մի ճառ ասեց, որ ունեցաւ մեծ աշուղթիւն: Գամբետտայի միջնորդութեան առաջարկութիւնը ստացաւ 400 ձայների մեծամասնութեամբ 53 ձայների դէմ:

—Գերմանական բայեստագը շարունակում է քննել բիւրժուալ Գաղթականութիւնը վերանկելու ծախսերի յօդուածը ընդունելու ժամանակ պատգամաւոր Կնապպ ասեց որ գերմանացի գաղթականները նախապատու են լաւ հանգամանքներում ապրել օտար երկրում, Ամերիկայում, քան թէ վատ հանգամանքներում իրանց հայրենիքում: Պատգամաւոր Ֆրոմէ նկատեց որ սօցիալիստները դեմ բացառական օրէնքներ շատ նպատակներ բանադրելու գաղթականութեանը: Մակս Զիլը նկատեց որ Ամերիկայում հարկերը չեն ծանրանում կենսական պիտոյքների վրա և դիմաւորական պարտաւորութիւնը աւելի անշնչաւ է, քան թէ Գերմանիայում: Բիւրոյի բացատրեց որ ոչ թէ միայն ծրարախոտի վրա ակցիդի բարձրացնելը, բայց և ծրարախոտի արդիւնաբերութեան գործի անհատատ լինելը վնասակար ներգործութիւն է առում, ստիպելով բանուորներին, որոնք այդ գործով պարագլու էին, ահապէս խմբերով գաղթել: Բարեսիրտ գերմանացին էլ, աւելացրեց Բիւրոյի, կարող է վերջապէս համբերութիւնը կորցնել: Այդ խօսքերին արխոսկրատ Կպսն պանդակաւ կուսակցութեանը պատկանող Փոն-Մէնիգերոզէ պատասխանեց. «Այո, և բարեսիրտ գերմանացին կարող է համբերութիւնը կորցնել, լսելով անհապառ պ. Բիւրոյի մի և նոյն դատողութիւնները: Բիւրոյի դիմելով պ. Մէնիգերոզէին բացականցեց. «Հաւատաւոր այնքան մօտիկ է նստած դռանը, որ նրան շատ հեշտ է գուրա գալ, եթէ չէ կամենում ինձ լսել: Այդ խօսքերին հետեց ծիծաղ, աղմուկ և բողբոջներ:

—Պահպանողական կուսակցութեանը պատկանող գերմանական լրագրիչները վրդովված են Բիւրոյի յանդիմութեանց, որով նա արխոսկրատ Մէնիգերոզէին պարլամենտի դուռը ցոյց տուեց: Ընդհակառակն ազատամիտ լրագրիչները գովում են Բիւրոյի քաջութիւնը և նրա եռանդը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱՋԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐՈՒԳ, 1 ղեկավարելու: «НОВОЕ Время» լրագրիչը հաղորդում է. Մրովինսկի, Տեղեկ և Ֆուրսով մտադիր են բողբոջել բարձր դատարանին: Տրիգունովի գործը կը քննվի սենատի առանձին բաժնում դատական ներկայացուցիչների մասնակցութեամբ յունկարի կէսին:

Ս. ՊԵՏԵՐՈՒԳ, 1 ղեկավարելու: Պետական բանկի 5% տոմսերը առաջին շրջանի արժէ 94 ռ. 30 Կ., երկրորդ 90 ռ. 87 Կ., երրորդ 90 ռ. 5 Կ., չորրորդ 90 ռ. 87 Կ., հինգերորդ 90 ռ. 75 Կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսեր արժէ 223 ռ. 25 Կ., երկրորդ 216 ռ. 25 Կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսեր արժէ 90 ռ. 5 Կ., երկրորդ 90 ռ. 62 Կ., երրորդ 90 ռ. 5 Կ., օսկի 7 ռ. 77 Կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 25,40 պէնս, Ամստերդամի վրա 128,62 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 217 մարկ 25 պֆ., ֆարկի վրա 268 ֆրանկ: Բօրսայի արամադրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՐԻ ԱՐՄԵՐԻՆԻ

Բիւրոյի ուրիշ առողջ մշակների հետ միասին, մի տեղ, հեշտութեամբ վերափոխում են սրանց վրա այդ գարշելի ցաւը: Ես շատ ժամանակ, երբ տեսնել եմ հայ մշակին այդ ակառով վարակված դարմացել եմ և չեմ կարողացել ինքս ինձ հաշու տալ, թէ ինչպէս, որտեղ է գտել նա այդ ցաւը: Եթէ անբարոյական տեղերում, բայց որտեղից նրան այդպիսի մի չափաւորութեան համար միջոցներ, երբ նա հաշու հաղ կարողանում է իր գլուխը պահել մի կտոր չոր հացով: Հարցը բացատրել են ինձ իրանք մշակները, պարզմտօրէն խոստովանելով իրանց անմիջութիւնը այդ բանում: Բայց ֆիզիքական ակտիւր Պարսկաստանից եկող մշակները բերում են իրանց հետ և բազմատեսակ բարոյական արեւոյ, որոնցից նոյնպէս ազատ չէ կարողանում ապրել հայ մշակը: Դուք կը զարմանաք տեսնելով, թէ Եւրոպայում կամ Դարբաղի գաւառներին խորքերից եկած մի օր և իցէ անմեղ, պարզմտ գիւղացին, որ հաշիւ թէ իր կեանքում անբարոյական միջոցների դիմած լինի, մի կամ երկու ամսում այստեղ այնպէս լրբանում, անբարոյականանում է, որ նրա համար շատ ժամանակ սողոմակայն յանցանքը անգամ սովորական բան է դառնում: Բայց պէտք է նկատած, որ այդչափ անբարոյականանում են հայ մշակներից միայն անհափաճանները, այսինքն նրանք, որոնք դեռ պատանական հասակի մէջ են, որոնց բնական խելքը դեռ իր հասունութեան չէ հասած, և այդ պատճառով նրանք շատ հեշտութեամբ են հեղափոխվում չիջապատող հանգամանքների ազդեցութեան: Իսկ ինչ վերաբերվում է չափահասներին և տալիքը լրացածներին, սրանք անխախտ պահում են գիւղական անմեղութիւնը առաքելի և միաժամ կենցաղավարութեան հետ միասին: Երիտասարդ մշակներից մի քանիսը հեռու չեն նոյնպէս ուրիշ անբարոյական բաներից ինչպէս՝ արքայազնութիւնից, գողութիւնից, միամտից դէմ թըշնամական դաւեր լարելուց, չուսլ և աննպատակ

փողեր չափելուց և այլն: Վերջին յատկութիւնը նա մասնաւոր տարածված է նրանց մէջ: Պատահում է, որ այն մշակը, որ ամական 10 կամ 12 ռ. ուժիկ ունէ, շատ ժամանակ տեսնում եմ ան ան և ուրիշ հանդիսաւոր օրերին կառքերի և սրանց նման չափ բաների վրա վատնեց իր մի ամսվայ դառն քրտիւքով ձեռք բերած ռուբլիները: Այդպէս անում են ի հարկէ նրանք, որոնք ընտանեկաններ չեն, իսկ նրանք, որոնց ընտանեկաններ և դաւաններ հեռու հայրենիքում սպասում են օգնութեան, ինչպէս ասում են իրանց բերանից կտրում են, մի կտոր ևս հացով, մի բաժակ սառը ջրով են անցկացնում իրանց օրերը, թէ ինչ է հայրենիքը վերադառնալու ժամանակ ևս երես չը մնա իրանց մանր դաւանների առաջ: Բայց այն ևս կոպէկներն էլ, որ մշակի մի քանի տարվայ դառն աշխատանքի դիմն է, շատ ժամանակ նրա ընկերների գողութեան գոհ են դառնում և նա ստիպված է լինում այնուհետեւ մի քանի տարիներ էլ աւել պանդխտութեան մէջ դեղերով իր անցեալ տարի տեսայ մի հայ մշակ, որի երեք տարվայ աշխատանքի պտուղ 75 ռ. գողացել էր նրա պարսկի ընկերակիցը և այդ էլ այն ժամանակ, երբ նա մտադիր էր միւս օրը վերադառնալ այդ փողերով իր հայրենիքը: Ինքզ մարդը յուսահատութիւնից ծեծում էր իր գլուխը, լիզում էր անխիղճ պարսիկի ոտերը աղաչելով նրան, որ գտնէ գողացածի մի մասը վերադարձնէ իրան, բայց խորամանկ համաշարին յանձն չէր առնում իր գողութիւնը: Սակայն պարսկի մշակների գողութեան և առաքակութեան վրա զարմանալ չէ կարելի, ըստ որում այդ նրանց առանձնայատկութիւններն են: Նրանց մեծամասնութիւնը օտարութիւն է դուրս գալիս հէնց իր այդ վայրենի կրքերը գործ դնելու նպատակով, ուղիղ ճանապարհով ապրուստի միջոց գտնելը նրա համար երկրոր-

դական բան է: Ապացուց ձեզ Ղուբայի առաջակները, որոնց մեծամասնութիւնը կազմում են Պարսկաստանից գաղթած հաշարիները: Բայց ինչին վերաբերել երիտասարդ հայ մշակների այդ բարոյական արեւոյի գողութեան, առաքակութեան և ուրիշ յանցանքների պատճառը, արդեօք նրանց թող ընտանեկանութեան, թէ նրանց տնտեսական դառն վիճակին, յուսահատ դրութեան, չըջապատող հանգամանքների ազդեցութեան: Կասկած չը կայ, որ վերջիններին Հայ մշակը, ինչպէս և մի ուրիշ անհատ, որքան որ անուս, որքան որ տգէտ լինի, երբեք նա չի յօժարվի, որ իր ձեկատան դրոշմին գող, չարախոտ, առաքակ և ուրիշ սրանց նման զգուշ լի տերմիններ, նա երբեք չի յօժարվի, որ իր անուսը կեղտոտվի ընկերակիցների և հասարակութեան առաջ, նա նոյնպէս, ինչպէս ուրիշները, ունի ինքնասիրութիւն: Հայ մշակը գողանում է, որովհետեւ նրան ստիպում է քաղցածութիւնը, նա երբեք յայդ չի անի, եթէ այսօր նրա փորը կուշտ է, նա գողանում է, որովհետեւ նրա աչքի առաջ պտուղ են վատ օրինակներ: Հայ մշակը իր մի ամսվայ քրտիւքով աշխատած կոպէկները, ինչպէս վերի ասացինք, մի օրվայ մէջ վատնում է, փչացնում է, որովհետեւ երկար ժամանակ ֆիզիկական աշխատելով, նրա բնութիւնը մի օր վերջապէս պահանջում է աշխարհային լիւթիւն ու բաւականութիւն և նա ըրիւկ է անում լրացնել այդ անհրաժեշտութիւնը: Բայց առաջ, նրա մի օրվայ, մի ժամվայ ըստականութիւնը շատ թանկ է նստում: Նրա կեանքի համար թեթեւացրու փորը ի շատէ նրա ֆիզիքական ծանր աշխատանքները, տուր նրան խոտակ բնական, մաքուր օդ, առողջ և սննդաւոր կերակուրներ և դու կը տեսնես, թէ նա ինչպէս կանոնաւոր և վայելուչ կեանք է վարում: Բայց թողնեք այդ և դառնանք նրա դրութեան ուրիշ կողմերին:

(Կը շարունակվի)

